ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

Ք. Երևան

«21» հուլիս 2022թ № 1273-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1550-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1 կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1.Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի՝ «ԷՖ-ԴԻ-ԷՅ լաբորատորիա» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հունվարի 29-ի N 60-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին N 1550-Ա հրամանով հաստատված հավելվածի 3-րդ կետից հետո լրացնել նոր 4-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 10-ի «Ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 155-Ն որոշում»:

2. Հիմք ընդունելով սույն հրամանի 1-ին կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-22 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

3. «ԷՖ-ԴԻ-ԷՅ լաբորատորիա» ՍՊԸ և «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված N PI003606 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից 1 օր հետո նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր (N PI003606 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ):

4. Սույն հրամանի 1-ին կետով նախատեսված լրացումը գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի № 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն.Տերյանին:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

7/25/2022

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124